

## ՎՐԱՍՏԱՆ - ՄԱՆ

### ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓ. «ՄԵԾ ԴԱՏԻՎ ԵՄ ՈՒՆԵՑԵԼ՝ ՄՊԻՏԱԿ ՏԱՆԸ ՈՂՋՈՒՆԵԼ ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼՈՒՆ»



Այս հայտարարությամբ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հանդես եկավ ԱՄՆ փոխնախագահ Մայք Փենսի հրավերով, ԱՄՆ-ում եռօրյա պաշտոնական այցով գտնվող Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հետ Սպիտակ տանը կայացած հանդիպմանը: Դոնալդ Թրամփի եւ Գիորգի Կվիրիկաշվիլու հանդիպումն անցավ Վրաստանի վարչապետի եւ ԱՄՆ փոխնախագահ Մայք Փենսի հետ պաշտոնական բանակցություններից հետո:

Ինչպես հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, ԱՄՆ նախագահի կողմից հանդիպմանը վրացական կողմը Վրաստանի հետ հարաբերությունների աջակցության վերա-

## ՄԱՅԻՍԻ 9-Ը ԶԱՂԹԱՆԱԿԻ ՏՈՆՆ Ե

### ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ՖԱՇԻՉՄԻ ԴԵՄ ԶԱՂԹԱՆԱԿԻ 72-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

Մայիսի 9-ին Վրաստանը նշեց ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 72-րդ տարելիցը:

Տոնական օրը Թբիլիսիի Վակեի զբոսայգում Անհայտ զինվորի հուշակոթողին ծաղկեպսակներ խոնարհեցին եւ հարգանքի տուրք մատուցեցին Զամայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը, Վրաստանի պաշտպանության նախարար Լեւան Իզորիան, Երկրի գործադիր եւ օրենսդիր իշխանությունների ներկայացուցիչներ:



Երկրորդ աշխարհամարտի վետերաններին հաղթանակի առիթով շնորհավորական ուղերձով դիմեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:

Զաղթանակի 72-րդ տարելիցի առթիվ, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու որոշմամբ, պատերազմի վետերաններին փոխանցվել են դեղորայքի վաուչերներ: Այդ նպատակով, նախագահի պահուստային հիմնադրամից հատկացվել է ավելի քան 93 հազար լարի: Ինչպես

տեղեկացրեց նախագահի աշխատակազմի ղեկավար Գիորգի Աբաշիշվիլին, նախագահի պահուստային հիմնադրամի եւ «Ավերսի» ընկերության միջեւ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, պատերազմի 922 վետերաններին կտրվի 140 լարիի վաուչեր:

Նշենք, որ Երկրորդ աշխարհամարտի Վրաստանից մասնակցել է շուրջ 700 հազար մարդ, որից 350 հազարը զոհվել է ռազմաճակատում: Ներկա դրությամբ, Վրաստանում ապրում է 948 վետերան:

## ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՐՑԱՍԻ

### ՀԱՆԴԻՍԱՎՈՐՈՂԵՄ ՆԵՎԵՅ՝ ՀԱՅՈՅ ԵՈՒՍՈՆԸ

Երեւանի «Հաղթանակ» զբոսայգում մեծ խանդավառությամբ նշվեց ֆաշիզմի դեմ հաղթանակի 72-րդ տարելիցը եւ Շուշիի ազատագրման 25-ամյակը:



Հաղթանակի եւ խաղաղության տոնի առիթով կազմակերպված միջոցառմանը մասնակցելու նպատակով «Հաղթանակ» զբոսայգի էին եկել Ն.Ս.Ս.Ս. Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը, Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը, Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, Հայաստանի օրենս-

դիր եւ գործադիր մարմինների անդամներ, հոգեւոր դասի ներկայացուցիչներ: Նրանք ծաղիկներ դրեցին Անհայտ զինվորի հուշարձանին ու հարգանքի տուրք մատուցեցին Հայրենական մեծ պատերազմում եւ Շուշիի ազատագրման պայքարում զոհված հերոսների հիշատակին:


(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

## ԵՎՐՈՒՆՏԵՎՐՈՒՄ

### ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ԵՎՐՈՊԱՅԻ ՕՐԸ

Մայիսի 7-ին Վրաստանը մեծ հանդիսավորապես նշեց Եվրոպայի օրը:

Այդ օրը Թբիլիսիի Ռիդեի թաղամասում, «Եվրոպայի» զբոսայգում տեղի ունեցավ տոնական միջոցառում, որին ներկա էին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, Երկրի գործադիր եւ օրենսդիր մարմին-



(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

### ՌԵՔՍ ԹԻԼԼԵՐՍՈՆ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՆՐՋԱՆՈՒՄ ԶԱԶՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆ Ե՛»

ԱՄՆ պաշտոնական այցի շրջանակներում Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ ԱՄՆ պետքարտուղար Ռեքս Թիլլերսոնի հետ: Հանդիպումն անցկացվեց ԱՄՆ պետդեսպարտամենտում:

Ինչպես հայտարարեց ԱՄՆ պետքարտուղարը, պաշտոնական Վաշինգտոնը խորացնում է Վրաստանի հետ ռազմավա-

րական համագործակցությունը: Թիլլերսոնի խոսքով, Վրաստանը հանդիսանում է տարածաշրջանում հաջողության



խորհրդանիշը, իսկ Երկրում իրականացվող բարեփոխում-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

### ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎԱՇԻՆԳՏՈՆՅԱՆ

### ՀԱՆԴԻՍՈՒՄՆԵՐԸ ՎՐԱՅ՝ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐՆ ԵՆ»



Այսպես գնահատեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին՝ Վաշինգտոնում Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հանդիպումները ԱՄՆ նախագահի, փոխնախագահի, պետքարտուղարի, պաշտոնական այլ անձանց հետ:

- Դա նաեւ մեր դիվանագիտական կորպուսի հաջողությունն է: ԱՄՆ նորընտիր նախագահն ու փոխնախագահը, ովքեր ունեն ծանրաբեռնված ժամանակացույց, հանդիպեցին Վրաստանի վարչապետի հետ, եւ հստակորեն վավերացրին Վրաստանի ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության հարցերում իրենց աջակցությունը: Գտնում են, որ դա մեր դիվանագիտության, մեր ընդհանուր գործի հաղթանակն է,- ասաց Գիորգի Մարգվելաշվիլին:

## ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

### ՎԻԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌՈՒՅՈՒՄ ԵՆՔ՝ ՈՒՆԵՆԱԼՈՎ ԽՈՐԸ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Հայաստանի պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը ռուսական «Ինտերֆաքս» գործակալության հետ հարցազրույցում անդրադարձել է հարեւան երկրների, հատկապես եղբայրական Վրաստանի հետ հարաբերություններին:

Պատասխանելով ՆԱՏՕ-ին անդամակցությանը միտված Վրաստանի հետ հարաբերությունների հարցին, Վիգեն Սարգսյանն ասաց. «Ես չգիտեմ, թե Վրաստանը ինչ կորոշի իր արտաքին քաղաքական վեկտորի հարցում: Նրանք ունեն իրենց դիրքորոշումը եւ վերջին ժամանակներում պարբերաբար լսում ենք, որ իրենք նպատակաուղղված են իրենց երկիրը նախապատրաստել ՆԱՏՕ-ի հետ սերտ համագործակցությանն ու անդամակցությանը:

Վրաստանի հետ էլ հարաբերությունները մենք կառուցում ենք՝ ունենալով հազարամյակների պատմություն, պետական սահման, որը, ի դեպ, ամենաի՛ն պետական սահմանն է աշխարհում եւ ունի խորը եղբայրական



(Շարունակությունը՝ 2-րդ էջում)





